առաջարկել կնքել պայմանագիր, մինչդեռ հայցը էլեկտրոնային համակարգ է մուտքագրվել է 12.03.2026թ., այսինքն, հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելուց հետո:

Արդյունքում Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից բաց է թողնվել հայցը Դատարան ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետը:

Նշված հիմնավորումներով, Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման, քանի որ լրացել է հայցը Դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը, ինչով պայմանավորված՝ գործի այլ փաստերի հաստատմանը և ապացույցների գնահատմանը չի անդրադառնում:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա՝ նկատի ունենալով, որ հայցվոի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված՝ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEBF-1F41-421A-9F54 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am